ՄԵՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքը հարուստ է պատմական հուշարձաններով: Վերջիններիս վերականգնման եւ արդիականացման խնդիրները մշտապես քննարկվում են ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական խորհուրդներում: Նախագծերը միայն դրական որոշման առկայությամբ են ստանում գիտական վերականգնման թույլատրություն: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցները համաշխարհային մշակութային ժառանգության մասն են համարվում, ուստի գիտական քննարկումներին պարտադիր մասնակցում են միջազգային փորձագետներ:

Պատմական հուշարձանների վերականգնումն ու օգտագործումը, ժամանակի կոմունալ պայմաններին եւ պահանջներին հարմարեցնելը՝ պատմական տեսքի եւ միջավայրի պահպանմամբ, վերականգնման նախագծերում առաջացնում են բազմաթիվ խնդիրներ, որոնք իրենց լուծումն են ստանում քննարկումներում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքում գտնվող թանգարանները. Մայր Տաճարը՝ Մայրավանքի ամենահին կառույցը, իր շուրջն է համախմբել վանական բազմաբնույթ այլ կառույցներ, որոնց ձեւավորումը հիմնականում բխել է Մայր Տաճարի արժեւորումից:

Ի. դարի սկզբներին Մկրտիչ Ա. Վանեցի Կաթողիկոսի կողմից կառուցվել էր «Խրիմյան» թանգարանային շենքը, որն այդպես էլ չէր հասցրել ցուցադրություն ունենալ, քանի որ խորհրդային տարիներին իշխանությունները թալանել էին Մայրավանքի մշակութային արժեքները՝ հնատիպ գրքեր, գորգեր, եկեղեցական սպասք, արխիվ... Արդեն 1950-ական թվականներին Մայրավանքի վերստին համալրված մշակութային արժեքները կարիք ունեին ցուցադրության. այս խնդիրը լուծեց երջանկահիշատակ Վազգեն Ա. Կաթողիկոսը դեռեւս 1956 թ.:

1869-ին Մայր Տաճարի արեւելքում Գեւորգ Դ. Կաթողիկոսի օրոք կառուցված սպասքատունը օգտագործվել էր որպես Մայրավանքում պահվող գանձերի ցուցադրության սրահ: 1960-ականների սկզբին այս սրահը այլեւս չէր կարող բավարարել ժամանակի պահանջները: Խնդիր դրվեց կառուցել թանգարան-

գանձատուն: Գանձատունը կառուցվել է նոր Վեհարանի հարավային կողմում. հովանավորներն էին Ալեք եւ Մարի Մանուկյանները: Այդ կառույցի ներսի սրահներում ցուցադրվեցին Մայր Աթոռում պահվող մշակութային բազմաթիվ արժեքներ:

Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետն իր գահակալության հենց սկզբից հոգ է տարել Մայրավանքի տարածքն ըստ համապատասխան նշանակության կառույցների գոտեվորելու մասին: Ընտրված թանգարանային գոտին սկսվում է գրադարան-թանգարանով, որը հետագայում վերանվանվում է «Գանձատուն», ձգվում է դեպի արեւելք՝ ընդգրկելով հին Վեհարանի, Խրիմյան թանգարանի շենքերը, ապա՝ Ղազարապատի հարավարեւմտյան հատվածը՝ Ռուբեն Սեւակի անվան եւ գորգերի թանգարանները, բոլորը ներառելով Մայր Տաճարից դեպի հարավ ընկած տարածքում՝ մեկ թեւում:



ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԹԱՆԳԱՐԱՆ

2015 թ. տխուր, սակայն հիշարժան տարելից է ողջ հայ ժողովրդի համար, ուստի Ամենայն Հայոց Հայրապետը մեծ նախանձախնդրությամբ է պատրաստվում՝ ջանալով կարեւոր ծրագրերը 2015-ի նախօրյակին ավարտին հասցնել: Այդ աշխատանքներից են նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքում՝ թանգարանային գոտում գտնվող կառույցների նորոգումն ու վերականգնումը:

Գանձատունը եռահարկ կառույց է՝ արտաքինից երկհարկ ուղղաձիգ բաժանումով, կիսանկուղային հարկով, կարմրավուն տուֆով. ճարտարապետն է Բաղդիկ Արզումանյանը: Հատակագծում կենտրոնական մասից քիչ աջ բարձրանում է կառույցի խաչվող կամարներով գմբեթավոր հատվածը, որի հյուսիսային մասում՝ երկրորդ եւ երրորդ հարկերում տեղավորված էր գրադարանը, իսկ հարավային հատվածում՝ թանգարանային ցուցասրահները:

Գանձատան վերանորոգումը սկսվեց 2011 թվականին: Մայր Աթոռի տարածքի հարավարեւելյան անկյունում, Գանձատան վերանորոգման աշխատանքներին զուգահեռ, կառուցվում էր Վաչե եւ Թամար Մանուկյան Մատենադարանի շենքը, որտեղ փոխադրվեցին Գանձատան գրադարանի գրքերը:

Ազատված սրահները վերանորոգվում են, եւ նախատեսվում է այստեղ զետեղել Ամենայն Հայոց կաթողիկոսներին նվիրված թանգարան-ցուցասրահներ: Կտեղադրվի նաեւ Գանձատան կառուցման հովանավոր Ալեք Մանուկյանի կյանքին եւ գործունեությանը նվիրված ցուցասրահ, որտեղ կզետեղվի նրա աշխատասենյակի կահ-կարասին: Կիսանկուղային տարածքները նախատեսվում են լաբորատոր-աշխատասենյակների, ցուցանմուշների հետ աշխատելու, վերականգնելու, ինչպես նաեւ ֆոնդային նմուշների սենյակների համար: Կիսանկուղային տարածքը լիարժեք օգտագործելու նպատակով նախատեսվում է համապատասխանաբար ավելացնել կիսանկուղային եւ առաջին հարկերն իրար կապող մուտք՝ աստիճանավանդակի հետ միասին: Նշված փոփոխությունների նախագծի հեղինակն է ճարտարապետ Սամվել Հայոցյանը: Վերանորոգման աշխատանքները կավարտվեն 2015-ի սկզբին:

Դեռեւս 2000 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնին պետք է հանձնվեր Արշիլ Գորկու (Ոստանիկ Աղոյան) նկարներից: Գարեգին Բ. Հայրապետը դրանց ցուցադրության համար որպես սրահ ընտրեց Խրիմյան Հայրիկի՝ Մայրավանքի հարավային կողմում կառուցած, սակայն այդ նպատակով չօգտագործված թանգարանային շենքը, որը վերջին մի քանի տասնամյակում որպես պահեստային շինություն էր ծառայում: Կառույցը մեկ հարկանի է՝ մոխրագույն տուֆե սրբատաշ քարով իրականացված: Ունի երկու մուտք՝ հյուսիսից եւ հարավից, որոնք իրար կապվում են մեկ միասնական նեղ սրահով: Այդ սրահի երկու կողմում տեղադրված են երկայնակի սրահներ՝ չորսական թաղակիր կամարներով: Շենքի նորոգման աշխատանքներն իրականացվեցին երկու փուլով: Առաջին փուլի աշխատանքները, որոնք ավարտվեցին 2003-ին, հիմնականում վերաբերում էին սրահների վերականգնմանը, սանհանգույցի, կոյուղագծերի ավելացմանը: Շենքի հարմարեցումը պատկերասրահին ենթադրում էր նաեւ օդափոխության, խոնավության, ջեռուցման համակարգեր: Առկա էր նաեւ տանիքի ծածկույթի փոփոխման խնդիր: Այս աշխատանքներն սկսվեցին 2013-ին:

Նախագծման փուլում առաջադրված հարցերը մի քանի անգամ քննարկվեցին տարբեր մասնագիտական խորհուրդներում, քանի որ պատմական հին կառույցում նոր տեխնոլոգիաների տեղադրումը առաջացնում էր բազմաթիվ խնդիրներ: Վերջնական տարբերակում որոշվեց սարքերը տեղադրել կառույցի տանիքում: Ծրագրի իրականացումը նախատեսվեց ավարտել 2014-ի վերջին:

Ռուբեն Սեւակի եւ գորգերի թանգարանների ստեղծումը Վեհափառ Հայրապետի՝ 2013 թ. ծրագրերից էր:

Ղազարապատը Մայր Աթոռի պատմական շենքերից է: Այն հին Վեհարանի հետ գրավում է Մայրավանքի հարավային հատվածը եւ իր տուֆակերտ

Վերամոնտաժված կիսակամարակապ ոճի վերամշակված սենյակը

Վերակոնդիցիոնավորված ԿԿԻ Վեհարանի սենյակը

յուրահատուկ ճակատով Մայր Տաճարի հետ կազմում է ճարտարապետական ամբողջական ներդաշնակություն:

Ղազարապատը, որպես միաբանական սեղանատուն, սկսել է կառուցվել Ալեքսանդր Ջուղայեցի Կաթողիկոսի օրոք՝ 1713 թվականին: Հին Վեհարանին կից հյուրանոցից այն անջատվում է դեպի միաբանական կացարանների բակը տանող թաղածածկ միջանցքով, սակայն դրա այլաձեւ կոնստրուկտիվ լուծումները, տեղ- տեղ կրկնակի պատերը ցույց էին տալիս, որ այն կառուցվել է ընդմիջումներով: Ղազար Ջահկեցի Կաթողիկոսի գահակալության տարիներին՝ 1750 թ., սեղանատան վրա կառուցվում է երկրորդ հարկ՝ դեպի Մայր Տաճարի բակն ուղղված քարաշեն պատով եւ աղյուսաշեն գմբեթներով:




Ղազարապատի ներքին պատերը, հին Վեհարանի նման, հիմնականում կառուցված են հում աղյուսով, որոնց հաստությունը առանձին հատվածներում հասնում է 260 սմ: Ծածկերը թաղակապ են՝ թրծված աղյուսից, եւ միայն մի հատվածում իրականացված են մեծածավալ տուֆե սրբատաշ քարերով: Տանիքը, իր ժամանակին համապատասխան, հարթ է եղել:

Կամարների վրայի հողի շերտը տեղ-տեղ հասել էր 2 մ: Տարիների ընթացքում տանիքի հողի ու ծածկերի, կամարների եւ թաղերի հսկա զանգվածների ճնշման տակ շենքի արտաքին պատերը Ի. դարի կեսերին թեքվել, անջատվել էին իրարից: Թաղերում առաջացել էին բազմաթիվ ճեղքեր: Ղազարապատը այնքան էր քայքայվել, որ փլուզումն անխուսափելի էր: Վազգեն Ա. Կաթողիկոսի նախաձեռնությամբ իրականացվել են վերականգնման աշխատանքներ (նախագծի հեղինակ՝ Ա. Գալիկյան): Ըստ նախագծի՝ շենքի առաջին հարկում վերականգնվել էր կառույցի պատմական բովանդակությունը՝ այն վերածելով ուսանողների եւ միաբանների համար խոհանոցի ու սեղանատան: Ընդլայնելով

Ղազարապատի շենքը, մեկ հարկանի հատվածի վրա հարկ ավելացնելով՝ այս մասը վերածվել էր ուսանողական հանրակացարանի: Այսպիսով՝ շենքի երկրորդ հարկը որպես հանրակացարան էր ծառայել 50 ուսանողի համար: Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության առաջին տարիներին վերջիններս նորոգվեցին՝ հարմարեցվելով սարկավագների համար կացարանների. կառույցում ավելացվեցին կոմունալ հարմարավետ պայմաններ:

2006 թ. ավարտվել էր միաբանական շենքի կառուցումը, եւ կիսանկուղային հարկը խոհանոցի հետ միասին հատկացվել էր միաբանական ճաշարանին: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Ղազարապատի առաջին հարկում տեղադրված խոհանոցի եւ ճաշարանի սրահները Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ վերանորոգվեցին, եւ որոշվեց այդ հատվածը օգտագործել Ռուբեն Սեւակի անունը կրող թանգարանի համար (նախագծի հեղինակ՝ ճարտարապետ Մարիամ Մովսեսյան):






Ռուբեն Սևակի անվան վերանորոգված թանգարանի ներքին տեսքը

Արշիլ Գորկու անվան վերանորոգված թանգարանի ներքին տեսքը

Ճաշասրահների պատերը եւ թաղերը մաքրվեցին աղակալումից, արեւելյան երեք սրահներում իրականացվեց նոր օդափոխվող հատակ: Հարավարեւելյան հատվածում գտնվող փոքր սրահը նախատեսվեց դարձնել թանգարանի տնօրինության համար սենյակներ:

Թանգարանի համար նախատեսվեց համապատասխան լուսավորություն, իրականացվեցին օդափոխության, ջեռուցման, հրդեհաշիջման եւ հրդեհաազդարարման համակարգեր: Փոխվեցին հին, քայքայված բոլոր դռներն ու պատուհանները, տեղադրվեցին կաղնեփայտե ապակեպատ նոր դռներ եւ պատուհաններ: Մշակվեց ցուցադրության նախագիծ, որը եւ իրականացվեց Ռուբեն Սեւակի թոռան կողմից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նվիրած գեղանկարների ու վավերագիր նյութերի ցուցադրությամբ:




Ղազարապատի արեւելյան հատվածում գտնվող թաղակապ անցումից հետո՝ 1970-1980-ականներին տեղադրված աստիճանավանդակի տեղում՝ առաջին հարկում, իրականացվեց առանձին մեկ սրահ սարկավագների ցնցուղարանների համար՝ պատմական կառույցում կրճատելով նախկինում իրականացված թաց կետերի քանակը: Ցնցուղարանի սրահի դիմաց տեղադրվեցին երկրորդ հարկ տանող նոր աստիճանավանդակն ու նախասրահը, իսկ երկրորդ հարկաբաժնում՝ ցնցուղարանի սրահի վրա՝ սան. տեխ. հանգույցը եւ լվացարանները:

Ղազարապատի արեւելյան թեւը նախատեսվեց հնատիպ գորգերի եւ մեկ հարյուրից ավել եկեղեցիների խորանների վարագույրների ցուցադրության համար:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պահվող գորգերի եւ վարագույրների մի մասն էր միայն ցուցադրվել Գանձատան սրահներում, իսկ մյուս մասը պահվում էր պահոցներում: Ցուցադրվող եւ պահոցներում պահվող նմուշների պահպանման խնդիրները պահանջում էին տեխնոլոգիական հատուկ համակարգերով օժտված դահլիճներ եւ պահոցներ, իսկ Գանձատունը նման պայմաններ չուներ:

Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում էր նաեւ մշակութային այս փասնյակ արժեքների պահպանման խնդիրը: Դա հնարավոր եղավ որոշակիորեն լուծել՝ ունենալով մշակութային արժեքների ցուցադրության եւ պահապանման համար նախատեսված կառույց, որը Ղազարապատի շարունակությունն է եւ ընդգրկում է դրա արեւելյան հատվածը՝ ներառելով ուղղահայաց տեղադրված պատմական երկու կցակառույց շինություն:

Թանգարանային կառույցը պետք է ունենար արդիական այն բոլոր տեխնոլոգիաները, որոնք ապահովելու էին մշակութային արժեքների պահպանությունը: Այս խնդիրը լուծելու համար պատմական շինությունը պետք էր զինել օդափոխության, հաստատուն ջերմաստիճանային եւ կայուն խոնավության համակարգերով:

Թանգարանային գոտու հիմնական կառույցներից է նաեւ հին Վեհարանի շենքը: Մայրավանքի գլխավոր հատակագծում այն գտնվում է Մայր Տաճարի հարավարեւմտյան մասում՝ ուղղահայաց Ղազարապատին: Հին Վեհարանի հյուսիսային մասում տեղադրված է «Տրդատա դուռը»:

«Տրդատա դուռը» հայտնաբերվել է 1962 թ., երբ քանդվում էր հին Վեհարանից դեպի հյուսիս ընկած հողաշեն խարխուլ շինությունը, որպեսզի եկեղեցական թափորների համար ուղիղ ճանապարհ ստեղծվեր Մայր Տաճարի արեւմտյան դռնից դեպի նոր Վեհարան: 1962 թ. մարտի 9-ին ճարտարապետական խորհրդի նիստում որոշվում է կատարել կամարի ամբողջական վերականգնում: Հաղթակամարի հորինվածք ունեցող այս կառույցը հիմքում ունի 4.7x6.2 մ չափեր, 3.6 մ կամարային բացվածք եւ 11 մ բարձրություն, հիմնախարսխից հետո հինգ շարքերում քարերի բարձրությունը 0.55-0.63 մ է, իսկ վերին շարքերը՝0.39-0.42 մ, տարբեր շինարարական շրջանների արդյունք են :

Հուշարձանը մի քանի անգամ վերականգնվել է, որի հետեւանքով, ենթադրվում է, որ դրա նախնական ձեւերը զգալի չափով փոփոխվել են: Այն տեղադրված է Մայր Տաճարի արեւելք-արեւմուտք առանցքով եւ հարավային մասով հարում է հին Վեհարանին:

Հին Վեհարանի հյուսիսային թեւի առաջին հարկը, որպես զբոսաշրջիկների համար մուտքային-սպասարկող հատված, վերանորոգվել է 2008 թ. (ճարտ.՝ Մարիամ Մովսեսյան):

2008-ից սկսվեցին հին Վեհարանի հարավային թեւի վերանորոգման նախագծային աշխատանքները եւ արդեն 2011 թ. ավարտվեցին: Վերանորոգման արդյունքում ստացվեց արեւելյան հատվածի կամարակապ նախասրահից դեպի թանգարանային գոտի տանող մուտք: Նախասրահի աջ մասում տեղադրված խարխուլ սենյակը վերանորոգվեց եւ վերածվեց գրատան: Դրանից դեպի արեւմուտք ընկած սենյակը նորոգվեց եւ նախատեսվեց էքսկուրսավարների համար, իսկ ձախ թեւը վերածվեց թանգարանային գոտու կառույցները սպասարկող վարչական հատվածի:

Հին Վեհարանի ամբողջական վերանորոգման աշխատանքներն սկսվեցին 2011-ից (նախագծի հեղինակներ՝ Արտավազդ Նազարեթյան եւ Արամ Սահակյան):



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԵՀԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ. ՏԵՍՔԸ ՀԱՐԱՎԻՑ

Վեհարանի առաջին հարկում՝ կամարասրահի արեւելյան հատվածում գտնվող երկու փոքր սենյակները վերահատակագծվեցին զբոսաշրջիկներին սպասարկող սենյակների: Կամարասրահի հարավային հատվածի երկու հարկաբաժինները վերահատակագծվեցին բարձրաստիճան հոգեւորականների համար ժամանակավոր կացարանների՝ առաջին հարկում նախասրահով եւ հանգստի սենյակով, իսկ երկրորդում՝ ննջարաններով: Կառույցի վերականգնման աշխատանքների նախնական փուլում առաջին հարկաբաժնում կատարվեցին հնագիտական ուսումնասիրություններ: Քայքայված եւ փլուզված պատերի հիմնային մասերի հնագիտական ուսումնասիրությունները բացահայտեցին, որ այդ հատվածը ժամանակին ծառայել է որպես Մայրավանքի պարսպապատի՝ Ղազարապատի հարավարեւմտյան անկյունային աշտարակ: Ըստ հնագետ Նյուրա Հակոբյանի՝ աշտարակը կառուցվել է Մովսես Տաթեւացի Կաթողիկոսի օրոք (1629-1632 թթ.): Աշտարակը բոլորակ կառույց էր՝ վառ կարմիր, լավ թրծած աղյուսներով (կարմիր կավի եւ երկաթի օքսիդի մեծ պարունակությամբ): Նման

աղյուսները գիպրությանը հայտնի են իբրեւ իրանական շինարվեստին բնորոշ տարրեր (թեեւ Հայաստանը հնուց ի վեր հայտնի է եղել իր նշանավոր կարմիր կավով՝ «գիլ Էրմենի» կամ «bollus armena»): Պեղումների արդյունքում պարզվեց, որ աշտարակը ունեցել է եռաշերտ հատակ:



«Երկրորդ մշակութային շերտը երեք հնոց վառարաններ էին, որոնցից մեկի կրակարանը պահպանված էր օդամուղ սարքի հետ միասին: Առավել հետաքրքրական էր երրորդ շերտը, որը Դ.-Ե. դարի դամբարան էր: Ճիշտ է՝ դամբարանում մասունքներ չհայտնաբերվեցին, պատճառն այն է, որ շատ հաճախ թաղումները կատարվում էին հատակի տակ, ծածկվում, փակվում՝ աննկատ լինելու համար», - իր 11.10.2010 թվականի հաշվետվության մեջ գրում է պատմական գիտությունների թեկնածու, հնագետ Նյուրա Հակոբյանը:

Այսպիսով՝ պարզվեց, որ թրծված աղյուսներով կառուցված աշտարակի գետնահարկի հատվածը ինչ-որ ժամանակ վերակառուցվել եւ օգտագործվել է որպես աղյուսի թրծման վառարան, իսկ դրա տակի շերտը վաղ քրիստոնեական շրջանի դամբարան է: Նորահայտ մշակութային արժեքը որոշակի փոփոխություն առաջացրեց հաստատված նախագծում, որը կրկին ներկայացվեց ճարտարապետական խորհրդի հաստատմանը. նախատեսվում էր պահպանել նորահայտ աշտարակն իր շերտերով եւ այն դարձնել ցուցադրելի:




Նորահայտ աշտարակն իր շերտերով այժմ ցուցադրվում է հին Վեհարանում: Այդ հատվածը, որն այժմ Վեհարանի առաջին հարկի կամարասրահի արեւելյան հատվածի հյուրասենյակի մի մասն է, ցուցադրվում է ապակու տակ: Այս նույն կառույցի երկրորդ հարկի հյուսիսային հատվածը, որը մինչ վերանորոգումը ծառայել էր որպես Ամենայն Հայոց կաթողիկոսների կյանքին ու գործունեությանը նվիրված թանգարան, որոշվեց նույնությամբ նորոգել եւ պահպանել իր նախնական նշանակությամբ: Այսպիսով՝ Հայոց հայրապետներին նվիրված

թանգարանը ամբողջությամբ նորոգվեց: Վերանորոգվեցին թանգարանի գլխավոր սրահի որմնանկարները, փոխվեցին քայքայված պատուհաններն ու դռները: Նորոգվեց հատակը՝ պահպանելով կոնստրուկտիվ նախկին լուծումները՝ քարե թաղերին զցված փայտե հեծանների վրա տախտակե հատակ՝ վրան իրականացված մանրահատակով: Թանգարանը ձեռք բերեց հովացման եւ ջեռուցման նոր համակարգեր, փոխվեցին նաեւ կոմունիկացիոն ցանցերը: Բարեկարգվեց հին Վեհարանի արեւմտյան բակը: Բակում նախկինից պահպանված ջրավազանը նորոգվեց, եւ տարածքը սալապատվեց տուֆ քարով: Պահպանվեցին նաեւ ջրավազանի առանցքով դեպի հյուսիս եւ հարավ ձգվող փոքր կանաչապատ տարածքները: Բարեկարգ տարածքում նորովի է ընկալվում վերականգնված հին Վեհարանի պատմական կերպարը, որը խոսուն վկան է իր ժամանակաշրջանի մշակույթի: Այս կառույցը ներկայացնում է մեր ժողովրդի պատմությունը՝ Դ. դարից մինչեւ Ի. դար:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի ուշադրության կենտրոնում էր նաեւ հին Վեհարանը: Նախանձախնդրության առարկան ոչ միայն կառույցի պատմական եւ մշակութային արժեքն էր, այլեւ՝ հայ կաթողիկոսներին նվիրված թանգարանի արժեւորումը. մենք մեր տուրքն ու հարգանքն ենք մատուցում՝ խոնարհվելով Մայր Տաճարի առջեւ գտնվող նրանց շիրիմներին, շիրիմներ, որոնք այսօր մեր պատմության եւ մշակույթի մասն են կազմում:

Վեհափառ Հայրապետի պահանջկոտությունը՝ անխաթար պահպանելու անցյալի հիշատակները, դրսեւորվեց ինչպես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն նվիրված կառույցների նորոգությամբ, Մայրավանքի պատմական բոլոր կառույցների վերականգնմամբ, այնպես եւ Հայոց հայրապետների շիրմաքարերի պահպանությամբ:

## РЕЗЮМЕ

Армянская церковная архитектура оставила неизгладимый след во всемирном культурном наследии, добавив к уже существующим архитектурным стилям самобытный армянский стиль.

Для продолжения древних традиций, начала нового этапа культурного и идеологического развития необходимо продолжать и развивать архитектурное искусство - этого мнения придерживается и Его Святейшество Католикос Всех Армян Гарегин Второй.

Благодаря обширной строительной деятельности, предпринятой Верховным Патриархом, сказано новое слово в архитектурном и строительном ис-

кусстве. Многогранные и разнообразные программы претворяются в жизнь, преодолевая многочисленные препоны и препятствия.

С самого начала своего правления Верховный Патриарх занимался вопросами обустройства территории Первопрестольного св. Эчмиадзина соответствующими и приличествующими строениями. Неотделимой частью этой деятельности является создание музейной зоны. Она начинается с музея-библиотеки, впоследствии переименованной в Сокровищницу, включает в себя старое здание Патриарших покоев, музей "Хримян", затем юго-восточную часть Казарапата – музеи Рубена Севака и ковров. Создание музейной зоны имеет важное культурное значение.

## SUMMARY

The Armenian Church architecture had left an indelible imprint in the world cultural heritage adding Armenian and unique style to the range of architectural styles. For continuing old traditions, for opening a new era and new way in cultural and spiritual ideology it is necessary to continue the progress and to develop the architectural culture. His Holiness Karekin II, Catholicos of All Armenians shares the same vision.

Thanks to huge architectural activity initiated by His Holiness, new achievements have been gained in Armenian architecture and building art. Different voluminous projects are fulfilled by overcoming various difficulties and complexities.

From the very beginning of his Pontificate, the Catholicos of All Armenians took care of surrounding the territory of the Mother See of Holy Etchmiadzin with buildings of respective significance. The indivisible part of this project is also the creation of a museum zone. It begins with a library-museum later called "Gandzatoun", includes buildings of the old Patriarchal residence, Khrimian museum, then the south-western part of Ghazarapat – the carpet museum and the museum named after Ruben Sevak. Creation of the museum zone has also a cultural significance.